



# ԲԱԶՄԱՎԵՊ

Ի ՏԱՐԻ. ԹԻՒ 5

1862

ՄԱՅԻՍ 1

ՀԱՅԱԴԻՐ

Մարերի Դ. — 11 Մայիս

**Ա. Թէոդորոս Սալհունի :**

Հովտէ հովիտ, ամսէ ամիս անցնելով ահաւասիկ ընդ առաջ կու գայ մեղի մեղրակաթն Ո՞յշիս, գեղեցկադյոնն յերկոտասան հարազատս տարւոյ, գոնէ մեր հայրենեաց և անոր նման աշխարհի մէջ. ուր այս ամիսս հայադիր հայկադիր՝ Ո՞յթերի անուամբ հեզիկ նազիկ կու պարէ՝ ի բլուրս և ՚ի բարձունս, բոլորովին կանաչ ու դալարազգեստ. ձեռքն ու ծոցն, գլուխն ու գօտին՝ փունջ փունջ գոյն գոյն ծաղկներով ցուած, որք իր թեթև գարշապարաց կոխած տեղէն կարծես դուրս բղիսեն. արծաթալիք քնարիսօսիկ աղքերակունք կանչեն կրկջան, ծաղկափետուր թուզը նիկք երգեն պարեն, թեթև թաթիկ ուլք և այծեմունք քովին սահին սուրան, հոտաւոր հովիկք և զով զեփիւնիկք ծոպ ծամերը ծածանեն, երբ

հովտէ հովիտ ցածնալով բլուր ցատքելով՝ անցնի վազէ բամբիչն բարձանց հայոց մրազարդն մարերի: Խնոր շողակաթ շոգոլի շնչէն՝ ծաղկներն վառվառ շողշողան, պտղունք խայծ խայծ խանձին կարմրին. և եթէ ձախն անուշիկ հասնէր ակընջիդ... Ո՞չ, երգն հայկածնին մարերեայ՝ հայոց հովասուն բարձանց վրայ, հազար տարիներ առաջ, երբ իր ազգն տէր ու ժառանգ էր բոլոր իր աստուածապարգե երկրին, այն ատենուան մրազարդ մարերեայ երգն այլ՝ իրեն նման աննման էր. մեր նոր լսած երգերն՝ ինչպէս ըոր տերեւ մը վարդի դիմաց՝ չէին կրնար կենալ. ոչ մեր գուսանք և ոչ օտար երգիչք կը ըստան անոր արձագանգները արթընցընեւ բարձր հայոց պաղանձաւաց մէջ. և թէ ձաշակիկ մը, ձայնիկ մը ուզեմք

երազել, թերեւս միայն իւթելայքը լուր. ներէն լոււածն վայելէ մեղաքերանն մասրերեայ. որ թուի՝ թէ դեռ լափատայ երիտասարդ վտակներով ծաղկած ծածուկ ծմակէ մը երգէ. “ Ի՞շա, ձմեռն անց, անձրեք անցին և գնացեալ մեկնեցան. ծաղիկը երևեցան յերկրի մերում. ժամանակ եհաս յատանելոյ. ձայն տատրակի լսելի, եղեւ յերկրի մերում. թզենի արձակեաց զբողոք իւր. որթք մեր ծաղկեալք ետուն զհոտս իւրեանց . . . . Անշուշտ եռանդուն սիրտ մը հոռ չդադրելով զմայլած, հոգեշունչ երգչին հետուզէ հրաւիրել անծանօթ մերձաւոր մը, սրբազան գեղեցիկ մը, աղաւնակերպ հեղաղէմ մը . . . . Ի՞նդ հովանեաւ. վիմին . . . — Այս, հայագիրն այսօր կու տեսնէ, կու յայտնէ այդպիսի մը, անծանօթացեալ անուամբ և տեղեաւ, որ ահա հանգչի ընդ հովանեաւ ծառոյն և 'ի վերայ վիմին. յետին և քաղցրագոյն հանգիստ, նախքան զհանգիստն յաւիտենից . . . .

Ի՞շաւասիկ նա. նման սրբազան ըսքանչելի եղօրորդւոյն, արդարե սպիտակ ու կարմիր է. երիտասարդ մը կուռ և կատարեալ հասակաւ. բնութիւնն առիւծու և կերպարանք աղաւնոյ. զիտէ մռնչել, բայց ընտրէ մնչել. իբրև մեծ աշխատանքէ և յերկար վշտերէ եկած անմարդաձայն ձորակի մը մէջ փռուած է մենաւոր ծառի մը տակ, որ կարծես իր գետնամած ձիւզերովն իբրև մայրենի թեզք կ'ուզէ պաշտպանել զանիկայ, որ աջը ձորեզերէն ցրցուած քարի մը վրայ դրած ծառին ներքեւ, և յոգնած գլուխն այլ քարին վրայ, ձախը՝ կուրծքին վրայ պարկեշտ պատմուձանին խորշերուն մէջ: Լարծես ծաղկապաճյածն մարերի 'ի հովիտ և 'ի բլուր թափառելով կու վինտուեր այս երիտասարդը, որ ըստ երախտապարտ պատմչի մը թողած յիշատակին “ Ի Կ աչօքն թուիս, և գանգրահեր, և Ե րեսօքն խարտեաշ, և անձամբն եր, կայն . . . (ացքերն սե, մազերն գուող գալարած, երեսն գեղին ու կարմիր,

հասակն ու կազմուածքն երկայնաձև). զգեստն պարզ մաքուր երկայն պատմուձան մը, վզէն ինչուան ծնկուլները և այլ վար. մէջքը գոտւով զսպած. սրունքն պարթեական սոնսպաններով ծածկած. դեղին դաստակներն կիսաբաց. ուսին քով մէկդի ձգած հայկական եղջերաձև խոյրն: “ Դրտուանց ամեննեին անհոգութեան կերպ մը, ներսուանց անհնարին հոգ մը, որ երեմն երբեմն բացխփիկ ըրած երկու սե աղամանդ պատուհաններէն կու յայտնուի. պահ մը յանկարծ սե ամպի սե շուքի պէս բան մը բոլոր երեսն սահելով՝ անանկ խեղճ ու ցաւգին երեւոյթ մը կու տայ, որ կարծես թէ քովի ձորակին վազած վտակին պէս՝ իրեն համար բոլոր աշխարհ կ'անցնի, և կրնայ ըսել ինքն այլ իբրև զլյուրն ցաւոց թէ “ Տրտումէ անձն իմ մինչեւ ցմահ . . . այլ շուտով ամպի տակէ ելած բարկ արևու ձաւագայթի պէս լոյս մի ծագէ դէմքին վրայ, սքանչելի հանգարսութիւն մը բոլոր անձը պատէ. կու խփէ երկայնաշար թարթափքը, և այնպէս անուշակ ու թեթև քունի մէջ կ'երեւայ, որ գարձեալ կարծես լսել իր մեղմիկ շնչէն, թէ “ Իս ննջեմ և սիրտ իմ արթուն կայ . . . Վ՛վ քուն ցանկալի քան զարթնութիւն, ովլ հրաշալի հանգարտութիւն, ովլ հանգիստ անթծութեան, ովլ տիրութիւն անտրտում. զեփիւռ, ծործոր, բոլոր գարնան գեղեցկութիւնն կու թուի իրեն հետ լըսել ու մրափել: — Վ՛հ, Հայկակ, թէ գիտէիր այս միայնութեան պատճառը, այս քնոյն պէտքը, թէ գիտէիր անոր յաջորդելու յետին արթնութիւնն, անշուշտ փափագէիր որ գոնէ Լիփեսուեան մանկանց չափ երկըննար այդոր քունն, կամ թէ նոյն խսկ կենաց յետին քունն այլ համակը շուտով խառնուեր անոր. անզգալի կերպով շունչը առնուր վեր քաշէր, զիմացնիս թողուր անարիւննահատակի շուշանագոյն մարմին մը, մանուշակաց և աղբրանց արեանց մէջ թաւալած: . . . .

Դայոց ուր եմք մեք . ուր է այս անձանոթ ձորակն , անծանօթ երկիրն , և ով այս աննման երիտասարդս . — Ո՞թէ կամաւ մոռցան պատմիչք և զլացան աշխարհագիրք , և մանաւանդ մեր բազմերախտ պատմահայրն և աշխարհագիրն լովսէս լիործնեցի , որ բոլոր Ո՞եծ Հայոց 200<sup>th</sup> չափ գաւառները մէկիկ մէկիկ համրեց՝ նշանակել մեզի լիործը երկիրը . Աալջունեաց գաւառը , լուրէնաշէն աւանը , Պարթենից դղեակը , և այն սրտառուչ Սէդէնուք ձուրակը , ուր այսօր զմեզ յանկարծ ձկեց Հայադիրն , Երփրատայ բարձր հոսանաց եզերքը , որ լարինէն իջնելով՝ ի Դերջան գաւառ , անտի կ'երթայ յլակեղեաց (Երզընկա) . և այս երկու յետին գաւառաց միջոց դար-վար երկիրն է մեր փնտուածն , որ կերպով մը որչափ անծանօթ է՝ այնչափ այլ ծանօթանալու անուններ ունի . կ'ըսուի Կորդուաց երիէր , Հայոց ուրիշ հեռու աշխարհի և գաւառներու անուանակից . թերեւս անոց նման կորդ , խորտուբորտ երկիր մը ըլլալուն համար , կամ բնակիցքն նոյն տեղէն եկած ըլլալուն համար . կ'ըսուի և Կոռերոյ երիէր՝ յանուն Առթեր աւանի . կ'ըսուի յատկապէս և առաւել հայտապէս Սահնունեաց (կամ Աալյունեաց , Աալյունեաց) գաւառ , որոյ մէջ էին վերոյիշեալ շէնք և տեղիք , և քանի մը ուրիշ այլ , զոր յիշէ հայադիրն և լուէ հիմկու աշխարհագրութիւն : Այս տեղերուս հնագոյն և մէկ հատիկ և մեզ հարկաւոր յիշատակն՝ ասկէ 1500 և աւելի տարի առաջ կ'ելլէ . այն տարիները՝ որ քաղաքական մթութիւն մ' այլ պատէր բոլոր մեր աշխարհը . երբ սատանեանն Արտաշը պարսիկ՝ Արշակունեաց թագաւորները հալածեց՝ ի Պարթեաց և ի Հայոց , բռնաբար տիրեց մեր երկիրն . ուսկից հեռացեալ պատանին Ծրդատ՝ Հռովմայեցոց քով կու մեծնոր , և կու պատրաստուէր քաջութեամբ տիրելու հայրենեացը . իսկ նախարարք Հայոց՝ ոմանք հնազանդէին բոնաւորին , ոմանք այլ իրենց երկիր .

Ներուն ամրութեանց վստահացեալ՝ կու սպասէին իրենց օրինաւոր տիրոջ՝ Ասոնցմէ մէկն էր Աալահունեաց գաւառին տէրն այլ՝ Աուրէն , որոյ ցեզաբանութիւնն մնացած չէ , այլ այսչափ յիշուած՝ որ թագաւորական ցեղէ էր կամ ինսամի , ինչպէս անունէն ալ կըր. նայ գուշակուիլ . այն անուամթ աւան մը շիներ էր , Աուրէնաշէն , յետոյ Օուրէն կոչուած , մօտ՝ ի հին թերդաշէնն կամ դղեակն Պարթէնից , որ յետոյ Իերդուսն ըսուեցաւ , և անունէն կ'երեկի որ շինած էր լերան մը կող , որոյ վրայ կայլ բերդն , և շինողքն էին Պարթեանք կամ թերեւս Պարթեաք : Այս երկիրս գրեթէ Ո՞եծ Հայոց արևմթեանն սահմանածայրն է և մօտ Շոքուն Հայոց ու Հյունաց բաժնին . ըսել է՝ Հռովմայեցոց իշխանութեան , որք այն ատեն ինչուան այն կողմերը նուածած էին : Հյունաց սահմանակցութեամթ կ'երեկի թէ Աուրէն յունական ախորժակներ այլ ունէր՝ իր անուան համեմատ սուր բարքը կակղցընելու համար , և կ'երեկի թէ տիկինն այլ յունազդի էր՝ Աղոտիւա՝ անուամթ որ է Սէրելէ (Ողաւիթի ըստ յունաց) եթէ հարկական աղոտ կամ աղոտնի անունէն առած չէ , կամ Օարմուհի անուան թարգմանութիւն մը ըլլայ (իբր յունարէն աղոտ , զարսմանալի) , և այս թերեւս իր բնաշնորհ գեղեցիկութեանն համար կամ անոյշ բարուցը , որովք անուանի էր . իրենց սիրոյն պտուղն այլ վկայէ որ՝ ի շնորհս մօրն և յունական մերձաւորութեանն կոչուեցաւ՝ Ամենատորոս , որ նշանակէ Տուրք Աթենասայ , իմաստութեան զիցուհւոյն . գեղեցիկ անուն , որ ոչ այնքան ծնողաց ընտիր ճաշակը ցուցընէ , որչափ ծածուկ շնորհաց ընտրութիւն մը , որ՝ ի հեթանոսութենէ կանչելով զնա՝ ի լոյս Վրիստոսի՝ յետոյ Աստուածատուր անուամթ պսակեց :

Պտղոց առատութեան ամսոց մէջ ընծայեցաւ Աթենողոր յամին Վրիստոսի 269 , կարիք հօր արիասիրտ որ . 1. Յօր . Աղոտիթոս կամ Տըզլիթոս :

դի, և գեղեցիկ ու գարաղի մօր՝ գեղեցիկ և գողտրիկ զաւակ, և աձելով առաւ այն հասակը և կերպարանքը՝ զոր տեսանք Անդեմնուտի ձորակին մէջ քարին վրայ հանգչած երիտասարդին վրայ: Ի՞այց տղայութեան հասակէն վեր անցնելու ատեն, երբ գալար մըրտենոյ մը պէս շիտակ կու բարձրանար կարմրուկ ու գանգրուկ, և ոպնիազեայ սկ աչքերն անթարգմանելի փայլունութեամբ մը կու վառէին, այն վըտանգաւոր հասակին շատ հեղնախան ձոտ հիւանդութիւններէն մէկն եկաւ վրան. տամուհինդ տարեկան էր, երբ աստեղանման գեղեցկութեանց մէջ՝ ցաւոց և վիրաց ամպեր ցրուեցան, և վիշբ անթժշկելիք, որք որդւոյն մարմնէն աւելի ծնողաց սիրտը կեղեքէին. թէպէտ և, երբ ցաւերուն ազդած հեզութիւնը բնատուր շնորհացը հետ խառնելով, Աթենոդոր՝ իր խարտեաշ գլուխը մօրը ծնդաց վրայ դրած, և ձեռւըներն հօրը ձեռաց մէջ՝ հանգչէր, կիսաբացիկ կիսամաղձիկ շողակաթ աչքերովն. տարակոյս կու բերէր թէ այդ ցաւագին մրուրքն՝ իրեն աւելի շնորհք բերած են թէ տարած. լուսաւոր կերպարանքն չէր խաւարած, այլ բարակ շուքերով խառնուած: Ուէ և նոյն իսկ ցաւերն զինքն աւելի սիրելի ըրին ծնողացն և ծնողքը իրեն, սակայն կրնար հայր մը՝ իր պայազատը, իր ծերութեան յոյար և յաջորդը, և մայր մը՝ իր սիրելագոյն ծնունդը՝ այդ տարակուսի մէջ տեսնել, և սիրոյն սաստիկութեանը կսկիծն այլ աւելի սաստիկ չզգալ:

Այսրենայ զբօսանաց և Աղուիթայ զարդարանաց ծախսքն՝ մեծաւ մասամբ բժշկաց և բժշկական դարմանոց տրուեցան. ինչ որ հարուստ նախարար մը և որդեգորով ծնողք կրնային ընել՝ եղան, բայց զաւակնին չբժշկեցաւ. չմնաց աստուած՝ որոյ ուխտ և նուերք և զոհ չմատուցին, բայց Աթենոդոր ըսորնտցաւ. Այօթն տարի, կենաց կարեսրագոյն տարիներն, հասակին աձման և ձեացման տարիներն, հիւանդութեամբ և ցաւերով անցան, և ցաւերուն անցնե-

լու յոյսն ալ գրեթէ մէկտեղ անցաւ: Եւ երբ առողջութեան յուսահամած երկար ողջութենէ մտածմունքն առաջ կու գար, երբ կենաց փափուկ թելն՝ ոլորուած մոլորուած երեար ծնողաց աչքին, և անգութ կտրողին մըկ բատն մօտենար մօր մը դիմաց, և երբ գալարագեղ հասակին միջակոտոր ծառի մը պէս՝ գետին տարածուած տեսնրէր կասկածոտ մոտաց. — ոհ, այս՝ ամէն ցաւէ՝ ցաւալի էր: .... Ի՞այց լուենք, գուցէ զուր տեղ հին և նոր սրտեր ճմլն: .... Այսպիսի ցաւոց միայն մէկ զօրաւոր բժիշկ և դեղ մը կայ. — կ'ուզես, ով կարօտեալ. — չորս մատ աշուրներդ վեր վերցու, կ'իմանաս, կու տեսնես: ... Ի՞այց ինչ ընեն անոնք՝ որ զուրկ են մեր սուրբ կրօնից շնորհքէն: — Իւե կէս երանի անսոնց այլ՝ որ գոնէ բնական լուսով կրօնասէր են և բարեսէր. և ազնիւ սրտի և մտածող գլխի տէր ըլլալով՝ իրենց կեանքը մարդկօրէն կ'անցընեն, և բարերարութեամբ կու ստանան կամ կու վայելեն այն բարիքը՝ զոր բնութիւնն չէ տուած կամ յետ է աւեր:

Այսպիսի մէկ մ' էր և Աղուիթա, թէ և դեռ քրիստոնէութեան շնորհքէն զուրկ, այլ ոչ հեռի: Իր երկիրներուն մէջ լիձ մը կար Սիէիբողն լսուած (որ յունարէն լսուելով՝ գուցէ Ուզենուտ կամ Ուզագարակնշանակէր հայերէն), զոր հիմա չենք տեսներ աշխարհացուցի վրայ. բայց պէտք էր բաւական ընդարձակ ըլլալ, որ Աղուիթա անոր եզերքը աւան մը կամ գեղ մը շիներ, իրեն զբօսանաց տուն և ազարակներ ու պարտէզներ. և շատ հեղն քաշուելով իր գառնուկ պատանէկին հետ, բնութեան գեղեցիկ տեսարաններով՝ անոր և իր ցաւերը մեզմէր. և ո գիտէ քանի երկայն ժամեր վայրկեններու պէս կ'անցնէին՝ այն ծիածածան ծովակին եզերքը, երբ Աթենոդոր գալար վարդաթըրի պէս գլուխը մօրը կութնցուցած, և նա իր վարսաւոր ճակատը՝ բարակձիւղ ուռենոց պէս որդւոյ նվրայ կախած, մէկ մը ջրէ-

րուն հանդարտութեանը վրայ, մէկ մը զաւակին անմեղ խաղաղութեը կունայեր, և սրտին բորբոքած կրակներն՝ այն երկու պայծառ զովութեանց մէջ կու մարէր։ | Ճին մէկայլ կողմը, շինած գիւղին դիմաց՝ աղքիւր մը կար, պատշաճ և անոյշ անուամբ Աբէնուար, և աւելի անոյշ խոխով կ'իշնար կու գար՝ թերեւս խառնուելու նոյն ծովակին ծոցը, ինչպէս Ի՞թենոդոր իր մօրը գիրկը. անտարակոյս շատ հեղ Ի՞զուիթա այդ աղքեր վազուկ արծաթները իր ոսկե. հատիկ որդւոյն ցաւած մասանց վրայ դարձուցեր, լուացեր ջնջեր էր. Ի՞թենոդոր անոր քով հաւաքեր դրեր էր մարերեայ գունագոյն բոյսերը, յառաջ քան փունջ փունջ ընծայելու իր մօրը, որ միշտ մայրաբար թէ իրեն և թէ իր որդւոյն մաս և պսակ կու հաներ այն մարգարտակաթ ծազկըներէն. Որդւոյն ցաւոց վրայ գորովելով՝ կու յիշէր անոր պէս ցաւագարներ. մանաւանդ երբ կու տեսնէր զոմանս անոնցմէ, որք ըստ բարբարոս օրինաց հեթանոսութեան, հաւածուելով՝ ի շինից և 'ի բնակութեանց, ամայի անբնակ տեղուանք կու թափառէն, իրեւ նզովեալք և անիծեալք. այս սովորութիւնս կար նաև մեր ազգին մէջ այլ, զոր յետոյ շատ իննամբ քով ջանացին ջնջել. | Ուսաւորին և իր համանման թոռն Ի՞եծն Ի՞երսէն, չէնքերէ հեռու տեղուանք հիւանդանոցներ և ուրկանոցներ (բորոտներու տեղ) շինելով, որք այդպիսի բարերարութեան տեղեաց մէջ հնագոյններն կը սեպուին. բայց իրենցմէ առաջ այլ է ազնուասիրտ տիկինն Ի՞զուիթա, որ Ի՞զբենուտ աղքեր քով շինեց. տառապելոց պատսպարան մը, ուր ժողովեցան 35 ցաւագարք, և գրթասիրտ Ի՞զուիթայի տուրքերովը կ'ապրէն, և կ'օրհնէին բարերարնին։

Ի՞սոնց մէջ էր և Դասիոս կամ Դասիկ ծերունին. որ, ինչպէս Ի՞զուիթա անոնց մայր սեպուեցաւ, ինքն այլ հայր եղաւ թէ անոնց և թէ նոյն ինքն Ի՞զուիթայ և Ի՞թենոդորայ։ Ի՞ոաջ՝ անոնց մէջ իր պատկառելի կերպարանոքն

և արծաթափայլ երկայն մօրուօքն Ի՞ պոլոնի կամ | ահագնի քուրմ մը կարծուէր, որ քաղցր շրթամբքն աւելի քան ոսկեթել քնարով ամենուն սիրտը կակղնելով, եթէ ցաւերնին չկըրցաւ բժշկել, գոնէ քնութեան բարիքներէն ու վայելութենէն սկսելով՝ այն ուամիկ ցաւագնելոց միտքը բարձրացուց ինչուան առ բնութեան տէրն. և երբ հասուց յարմար վիճակի, հանեց յայտնեց իր ծածկած հովուական սրինգը և նոր նուագ մը երգեց. զամէնքը ափշցուց, զամէնքը զմայլեցուց, զամէնքը հետևցուց իրեն. այս նոր նուագս՝ Ի՞ազովեցի հովուապետէն սովորած էր, անոր վարդապետութիւնն էր, Ի՞րիս տոսի աւետարանն էր։ Ծարունին Դասիկ գաղտուկ քահանայ էր, իր ընկերաց հովիւ եղաւ, մարմնոց ցաւերը թեթևացնելով՝ հոգիներուն մեռելութիւնն անգամ ողջնցուց. դարձուց զամէնքն ՚ի քրիստոնէութիւն. և հիւանդանոցի ու փշանոցի մէջ՝ հոգեզուարձ վարդանոց մը, դրախտ մը բայցաւ, ուր այն աշխարհէ մնուցուած և մերժուած տառապեալքն աւելի երջանիկ ու սըրտաբաց էին, քան իրենց երկար գերութիւնը թօթուող ու Տրդատայ յաղթական դարձով փառաւորեալ դիւցապաշտ Հայկազունքն։ Ի՞զուիթա և Ի՞թենոդոր այլ լսեցին Դասիոսի և Հիսուսի ձայները, և սրտերնին թնդաց. և թէ ոչ աւազանին ջրով ներսէն սիրով մկրտուեցան, և սիրով կ'երթային ծածկաբար սուրբ ծերոյն աւետարանութիւնը լսելու, որ յունարէն կու կարդայր սուրբ գրքերը և կու բացատրէր Հասկացողաց։ Ո՞ինչդեռ հոն, իրեւ աբելական սեղանէ մը՝ սուրբ կրօնից նուէրքն, աղօթք և զոհն՝ հեզօրէն կու բարձրանար առ Ի՞ստուած, դիմացը աւանին քով հեթանոսաց մեհեանները կանգնուած՝ կու հրաւիրէին զառողջ և զհիւանդ՝ ՚ի զոհ և ՚ի պաշտօն Հերակլի (| ահագնի) և Ի՞սկլեպեայ՝ առողջութեան չաստուածոյն, որոց տօնքն մասնաւոր հանդիսիւ կատարէին հոն տարուէ տարի։ Ի՞արեմիտ կամ ծռա-

միտ քուրմք և ժողովուրդք մեծ ջանքով կու յորդորէին զլթենողոր այլոր գայ այն մարդասէր աստուածներէն բժշկութիւն խնդրէ . բայց նա միշտ պատրուակներով կու զգուշանար . ինչուան որ հայրն այլ տեսնելով որդւոյն չափահաս տարիքը , որ քսանը անցուցէր է , կու խրատէր որ անհոգութիւն ցընէ . “ այս վեց տարի է կ'ըսէր , որ մեր աստուածոյ զոհ չես ըրած , թերեւս անոր համար այլ ցաւերդ կ'երկըննան . . . իսկ Իմենողոր՝ նոյն իսկ ցաւերը պատճառ կու բերէր զոհի չերթալուն . և ոչ միայն վեց՝ այլ և կըրկին վեց տարի խաբեց հայրը , և ձարտարութեամբ ազատեցաւ : Հաւանական այլ է , որ Առորէն իբրև գաւառապետ մը և թագազարմ , երբ լսեց Տըրդատայ գալն ’ի Հոռվմայեցւոց , փութացաւ դիմացը ելլելու , և արդունի բանակին մէջ էր , որ իր երկրին (Ալահունեաց) մօտ՝ Եկեղեց գաւասին մէջ Կայլ գետոյն եզերքը դադրեր էր :

Վանի մը տարի այսպէս անցնելէն ետև , որ մը Առորէնաշէն աւանն թըրն դաց զինուց շըուկով . թագաւորական զունդ մը զօրաց երևցաւ , որոց առաջնորդէր իշխանն Ապենտ . ասոնք Եկեղեց Երեզակ աւանէն գալով և դէպ յլ քստաշատ երթալով ’ի հին մայրաքաղաքն Հայոց , կ'անցնէին Ալհունեաց գաւառէն , որ ձամբուն վրայ էր . ոչ պատերազմի և ոչ պաշտպանութեան համար էր երթալնին , հապա յանցաւոր մը , կապուած մը , թագաւորին անհնազանդ մը կու տանէին , տէրութեան դէմ պարտական գտուած մահապարտաց ամենէն սաստիկ բանտը ձգելու , որ էր Իրտաշատ քաղաքին գետնափոր գութը . իսկ յանցաւորն այն էր Կրիգոր մը . . . . Ես հարկէ ամէն դիէ հետաքրքիրք կու վաղէին տեղեկանալու թէ ովէ է , ինչու համար է , և երբ լսէին թէ Վաճի արանց , Տըրդատ թագաւորի հօրը՝ Այսրովայ սպանողին որդին է , ինչպէս ակռանին կըրձտելով կ'ուզէին վիրապը չհասած հոն սպաննել ոչնչացնել զայն՝ որ քանի մը

տարիէ վերջը պիտի ըլլար իրենց խաւարէալ հոգւոց Լուսաւորին : Հարկ էր զօրակամնաց և կալանաւորաց հեռացը . նել վրէժինզիր ամբոխը , և ապահով տեղէ մը անցընել կապեալը . անշուշտ աւելի ապահով ձամբայ այլ չկայր՝ քան մեր ցաւագնելոց պատսպարանին սահմաններն , ուսկից զգուելով կու հեռանային այն ատեն առողջութեամբ , քանութեամբ և ազատութեամբ պարձեցող ժայոց . իսկ հիւանդըն , տկարքն և նեղեալքն համարձակութիւն գտնելով իբրև անկար և կարօտ մարդիկ՝ պահապանաց կասկած չէին բերէր . այսպէս կրցաւ Կասիկի իր ընկերներովն և Իմենողորորի հետ մօտենալ առ սուրբն Ուսաւորիչ , զորոյ խոստովանութիւնը արդէն լսած ըլլալով , և անշուշտ աստուածային ազգեցութեամբ իմաննալով թէ ինչ անձն է և ինչ պիտի ըլլայ այն կապուածն , բերաւ իբրև հովիւ հլու իր ցաւագար ոչ խարները՝ ապագայ հովուապետին սովոր ձգեց . և այն սրբազնն նահատակին առաջին հրաշքը և շնորհքը վայելեցին այս նեղեալքս . որք և առանց նեղութեան և ցաւոց՝ Իմտուծոյ փառք տալով դարձան : Հոն Կասիկ ծածկաբար իմացուց Կրիգորի թէ ովէ է հետնեղած իշխանորդին , և զաղտ հաւատցեալ ու դեռ անկնունք ըլլալն : Առբն Կրիգոր քաջալերեց զծեր քահանայն , և պատուիրեց որ առանց վախի առնուտանի պատանին իրենց դիմացը՝ արևելեան կողմը եղած աղբիւրը , (արդեօք Իրբենուտն , թէ ուրիշ մը) և հոն մկրտելով զլթենողոր՝ անուանէ թէրդոր , Իմենասայ տուրքը ընէ Աստրածագուոր : — Իյնպէս այլ եղաւ . Ուսաւորչայ ծածկեալ լոյսն , զոր հաւատցելոց ազքն միայն աեսնէին , և մկրտութեան ջուրքն , նորէն ծնան այն կայտառ տղայն , և մարմնոյ ու հոգւոյ աղտ ու բիծ՝ զամենն այլ շնջեցին . դէմքն աւելի քան զմանկութեանն պահառացաւ , հոգին ևս աւելի . և ոչ միայն գեղեցիկ , վայելու , կտրիչ , այլ և շնորհազարդ և սուրբ , մաքուր , պաշ-

տելի անձ մը եղաւ (Ծակողոր : Երանա-  
չնորհ մայրն այլ աստուածային պար-  
գևաց հաղորդ ըլլալով, երկուքն այլ  
չին բաժնուէր Դասկայ քովին. Վա-  
բենուտի ձորակը քրիստոնէութեան  
ծառածածուկ տաճար մը դարձուցին,  
հայոց հեթանոսութեան վերջի տա-  
րիներուն և վերջի ջանքերուն ատեն.  
երբ Տրդատ զրդեալ՝ ՚ի Դիտկղետիա-  
նոսէ հրաման հաներ և հալածէր ըզ-  
քրիստոնեայս իր նոր տիրած և ընդար-  
ձակած սահմաններուն մէջ. իր հա-  
ւատարիմ և անահմապաշտ իշխանքն  
այլ նոյն հոգւով իրենց երկիրներուն  
մէջ հսկէին : Իսայց Առուրէն որչափ այլ  
դիւամոլ և վրէժինդիր էր, չկրցաւ ի-  
մանալ որդւոյն քրիստոնէութիւնը, չը-  
լեց անոր անուշակ սաղմոսերգութիւնը  
Արքենուտի խոխոջանաց և Ալգենու-  
տի ծփանաց հետ : Խնչուան որ յետ  
վեց տարիներու՝ ուրիշներն կասկածե-  
լով և հասկրնալով՝ մատնեցին որդի մը՝  
իր հօրը, անմեղութիւն մը՝ անգիւու-  
թեան : — Իբր անսախորժ քնէ մը  
արթընալով Առուրէն, այն ատեն իմա-  
ցաւ թէ ինչո՞ւ Վաթենոդոր չէր երթար  
Ահագնի և Վոկլեպեայ սեղանները  
զոհիք և պատակօք պատուելու . թէ ին-  
չո՞ւ այնպէս միայնութիւն և առանձ-  
նութիւն կու սիրէր որդին՝ նաև յետ  
բժշկութեանն, իբրև տղայութեան և  
հիւանդութեան յիշատակաց սովորու-  
թիւն մը : Խնչ որ ծուռ հաւատքի մը  
եռանդն, հայրենի գութ և տիրական  
կամք մը կրնային ընել տալ՝ ըրաւ Առու-  
րէն. վեց ամիս աշխատեցաւ որդւոյն  
սիրտը դարձընելու . իր չափէն վեր այլ  
խոստմունքներ ընելով, և բոլոր Աալ-  
հունեաց գաւառին ընդարձակ տէրու-  
թիւնը և փառքը ցուցընելով եռան-  
դուն երիտասարդին . այլ ամեննեին չը-  
կրցաւ ազգել քրիստոնեայ սրտին : Հայ-  
րութիւնն դարձաւ՝ ՚ի տէրութիւն, տէ-  
րութիւնն ՚ի բռնութիւն, եղաւ հալա-  
ծիչ և դահիճ որդւոյն . կարելի խոստ-  
մանցն հակառակ՝ ամէն կարելի սպառ-  
նալիք այլ ըրաւ, և հասուց պատիժ ու  
զրկմունք . ակամայքան կամաւոր անզը-

թութեամբ տանջեց իր աղիքը, սակայն  
չկրցաւ զատել զորգին իր նոր և յաւի-  
տենական հօրէն, ՚ի Վարիստոսէ : Հետ  
վեց ամսոց յոդնեցաւ յուսահատեցաւ  
թշուառ և ողբալի հայրն . մէկ հատիկ  
և վերջին հնար՝ կամ ապրեցընելու  
կամ կորուսանելու՝ սեպեց իր սեւ սու-  
րը . սպառնացաւ ու վճռեց սոսկալի  
մահ . Ծակողոր բնաւ չվախցաւ մա-  
հուանէ, որ իրեն փափագելի հանգիստ  
մ' էր . Իսայց նոր Աանատրուկ մը տես-  
նել, նոր Լայէն մը, իր հօրը ձեռօքը  
սպաննուին, ո՞հ, այս գառն էր քան  
զմահ և մահերու մահ : . . . Եւաղ Ե-  
ղուիթայ . ոչ կողակից կենակից ամուս-  
նական իրաւունքն, ոչ կնոջական մայ-  
րական խանդաղատանքն և գութն՝  
չկրցան ազատել իր մէկ հատիկը : Պա-  
զանացեր էր Առուրէն . աշուրներն ա-  
րիւն, բերանն մահ կու փսխէր . ոչ ոք  
կրնար մօտենալ անոր . սպառնալեաց  
ժամանակն այլ անցեր էր . ըլլալիքն  
հասեր էր :

Ծակողոր վերջին անդամ մը նայե-  
լով իր կրկին և մէկմէկէ շատ աննման  
ծնողաց վրայ, բոլոր որդիսկան և քրիս-  
տոսական երկու կրակներով վառած ա-  
րևանման ացքերովն, աննկուն զօրավա-  
րի պէս, որ յետ ամենայն զօրականաց  
քաջ քաջ կ'ինկնայ զօրաւորագոյն թրշ-  
նամոյն առջեւ, արցունքները զսպելով  
և թողլով այն շէնքը՝ որ երբեմն իրեն  
ծննդեան տեղ, և ասկէ ետև իրեն հա-  
մար ամսութիւն և ունայնութիւն էր  
բոլոր աշխարհիս հետ, թերեւս մօրը  
դիմաց սարսափելի և անտանելի տեսա-  
րան մը ըբանալու համար, ելաւ գնաց  
անդարձ նետի մը պէս : Հառվակ, ձո-  
րակ, աղբիւրն և հիւանդանոց չկրցան  
արգելու զնա . ամէնուն վերջի նայ-  
ուածք վերջի բարեւ տալով . և ո՞վ գի-  
տէ ինչպէս սրտին չափազանց ծանրու-  
թիւնը և լեցունութիւնը թափելով  
Պասկայ գրկաց մէջ, և ընդունելով  
անկէ անմահութեան հաշակը և կե-  
նաց հացը, երիտասարդական ուժով  
մ' այլ ցնցելով զինքն և թափելով սուրբ  
ծերոյն դողդոջուն թերերէն և արտա-

սուաթոր մօրուքէն, փախաւ գնայ  
Արբենուտի ձորէն դուրս, և անցաւ մօ-  
տիկ և աւելի անծանօթ անձայն ձորա-  
կի մը մէջ, որ կ'ըսուէր ԱԵղեմնուտ.  
և հոն եօթն օր վեր վար պտըտելով,  
Հեփթայեայ օրիորդին նման, Աբդը-  
մսէ հի նման, ինքզինքը հրաժարեցնե-  
լով իր ծազկեալ կեանքէն, իր պայ-  
ծառ արեւէն, անգին մօր մը սրտա-  
կուր ծոցէն, կու նուիրէր միայն անոր՝  
ուսկից կու գան և ուր կու գաւունան ա-  
մենայն բարիք և ամենայն շունչք ար-  
գարոց. մինչեւ յոգնած և հանդարտած  
ընկաւ փռուեցաւ այն ծառին տակ և  
այն քարին վրայ, ուր տեսանք զինքը  
առաջին անգամ մեր պատմութեան  
սկիզբը. . . .

Հիմա գիտես, Հայկակ, ուր ըլլալդ,  
կու ձանչես ով է այդ քընաղ երիտա-  
սարդդ. կեցիր հոդ պահ մ' այլ, վեր-  
ջին պահ, վասն զի այլ երկայն ժամա-  
նակ չկայ. մօտեցիր այդ անտաշ ապա-  
ռաժ սեղանին քով, այդ ԱԵղեմնուտի  
սաբեկայ ծառին տակ. ես լուեմ, դու դի-  
տէ և զգա: . . . Ինայց ահա ետեւէդ վիշա-  
պի խօշիւն մը կու լուրի, առիւծու մուրն  
չիւն մը, ձորեցերէն վար վարազաթե  
սեւ արծուի պէս կու սլանայ կ'իշնայ ծա-  
ռին վրայ, ծառին ներքեւ, քարին մօտ...  
երկայնժանիք հրէշ մ' է, գազանագոյն  
քան զվիշապ, քան զառիւծ, քան զար-  
ծուի... ինքն է, ինքն, սուսերամերէն  
Աուրէն... որդւոյն փախստեան վրայ  
աւելի կատղած և արեան վրիժով լը-  
ցուած, իր հին պատենէն քաշելով ժան-  
գոտ սուրը, և “ Այդպէս, իմ երիտա-  
սարդութեանս երկամթ, այնքան կոտ-  
րած թշնամեայդ արեամթ չկշացած՝  
ծերութեանս ատեն ինձմէ իմ որդւոյս  
արիւնն այլ պիտի ուզէիր թափելու,,  
ըսելով կ'առնու, և մոլեգին դիւահա-  
րի պէս կ'ընկնի սարէ սար ձորէ ձոր  
որդին փնտուելու: . . . Ինչուշտ սատա-  
նայական ոգին զինքը քաշեր քշէր տա-  
նէր, ինչպէս երբեմն զլայէն ՚ի մահ  
Աբելի, կամ ինչպէս անկէ առաջ ինք-  
նին դժոխոց անդունդներէն ելած կու  
փնտաւէր զբախտին գուռը, որ մը ե.

րանեալ նախաձնողքը ձգէ ՚ի մեղս և  
՚ի մահ: Այսպէս դիւական թափա-  
ռանօք վերջապէս հասաւ ԱԵղեմնուտի  
ձորեզը, և իբրև սեւ արծուի տեսնե-  
լով բարձրէն ծառին տակ իր փնտուած  
որսը, հասաւ շուտ ու թեթև անոր  
վրայ: . . . Ինայց ՚ի հարկէ երկու քայլ  
մնացած՝ բնաբերաբար կամ ակամայ  
կամօք՝ կանգ առաւ. հայրենի բնու.  
թիւնն զօրանալով դիւական մոլու.  
թեան մէջ անգամ հիացաւ այն սքան-  
չելի հանդարտութեան և անմեղու.  
թեան թափանցիկ քունին վրայ, որուն  
նման բան չէր տեսած երբէք: . . . Ո՛հ,  
և ինչո՞ւ չձգեց սուրը ձեռքէն, ինչո՞ւ  
ցատքեց ընկնալու, և հայրական շըր.  
թունքները վեր վար բերելու այն  
մարգարտաշար վարդերուն վրայ, այն  
բարակ քրտնահար երեսներուն վրայ.  
այլ առանց դաշելու կեցաւ կանչեց կեր.  
կերեալ կոկորդով մը՝ “ Ամենողո՞ր,  
որդեակ, . . . Ուկոդոր հեղամբափ ա-  
շուընքները կէս մը բանալով և կէս մը  
զլուխը վերցընելով՝ պատասխանեց.  
“ Հայր իմ, . . . վերջին անգամ հօր  
և որդւոյ անուանակոչութիւնք: Աու-  
րէն գարձեալ այլայլած՝ հարցուց անոր  
թէ պիտի հաւանի իր կամացը և թոլ-  
լով զՎիրիստոս դառնայ ՚ի պաշտօն  
կոտոց: — Ուկոդոր՝ “ Ես Քրիստոսի  
հաւատացեալ եմ, ըստ, և այս հա-  
ւատոյս վրայ հոս կու մնամ,,,. և նորէն  
զրաւ զլուխն ՚ի քարին, խփեց շրթուն-  
քը և աչքերը... մնաք բարով արե,  
կեանք և աշխարհ: — Ինայց մէկ ան-  
գամմ' այլ Ուկոդոր բացաւ կիսակէս  
աշքը և շրթունքը, երբ Աուրէն վայ-  
րէնի վագեր պէս մէկ ցատքելով ձգեց  
ձախ ձեռքը, և որդւոյն երկու թիզ  
խարտեաշ մազերէն բռնելով վեր քա-  
շեց խնձորակերպ զլուխը, և պարկէշտ  
պատմուժանին օձիքէն կարապաճեպա-  
րանսցն երկընցաւ: . . . ՈՎ հրեշտակայ-  
ին կերպարանք, ինչպէս կ'այլափոխիս:  
— Իսկ Աուրէնայ աջ ձեռքէն յան-  
կարծ փայլակ մ'էր շողաց շեշտակի: . . .  
Ահա հոս միատեղ մէկդի կ'ընկնան  
պատմչին զրիչն, Աուրէնայ սոսկալ

սուրն, և Ուհոդորի Ճերմակ վզէն նըռնանման Ճղբուած կարմրահատ գլուխն:

Ուր են հիմա մեր մայիսի ծնած ծաղկունքն, ուր մնացին միազարդ մարերեայ մրգունքն: — Այսպէս, չկայ ծաղիկ հողածին՝ որ ցամքի. չկայ պրտուղ երկրաբոյս՝ որ չթօթափի. ամենայն դաշար ու պայծառ, յետքիչ ժամանակի պիտի ըլլայ մռայլ ու խաւար: Այսպէս ծաղիկ այն ծաղիկն է, որ երբ Ճղէն այլ զատուի՝ դարձեալ մնայ անթառամ, և մանաւանդ նոր գեղեցկութեամբ մը յաղթէ կանգուն ու ծօճուն ծաղկանց: Այսպիսի ծաղիկ է հայրազեն գաւնանման կոտորեալ երիտասարդն Ուհոդոր, թաւալեալ իր հովանաւոր ծառին և իր հանգստեան քարէ բարձին տակ՝ օջողով և մանուշակով հիւսուած խոտերու վրայ, Աեղեմուտի սգաւոր ձորակին մէջ. ուր հեղամնչիկ հովիկն խոնարհած կու խաղայ անոր արիւնլուայ վարդէ գիսակաց չետ. ինչուան որ երեկոյեան զովութիւնն դաղրեցընէ և պաղեցընէ կարմիր կաթիլներն, և գիշերուան լուսագնտիկն վերէն ծաթէ արծաթափայլ դողդոջուն Ճառագայթները, որք կու մարմին, շուք մը կու դառնան՝ Ուհոդորի մարմնէն ծագած հրաշափայլ լուսոյն քով: — Այս լոյսն անշոշտ առաջնորդեց այն մարմինը մեծցնող և գգուող և հիմա զինքը սրբաթունդ փնտուող անձի մը, մօք մը:... Ծտեսնենք, ցքննենք մենք այն մայրը Աեղեմուտի մէջ:... Դու այլ դարձիր, մայրիկ, դարձիր Ազուիթա՝ առ Դասիոս, և հրաման տուր. “Ե՛լ, հայրիկ, ել գնա ’ի Աեղեմուտ, հոն կու գտնես իմ հայրազեն գառնուկս, իմ միրկաթափ վարդենիս, իմ նուազած աղիքս. առ ու լուա այն արշալոյս Ճակատը. բայց կիսալուայ ըրած՝ բերնածի փունջ մը ոսկեթել մազերէն, որ զիսուս վերջին պսակ ընեմ. շուշանացեալ շրժունքները լեցուր մայրենի և հայրենի համբոյրներով. ապա մաքուր կուաներով գոյէ, գոյէ այն արևա-

կերպ գէմքը, զոր քիչ ատենէն տեսնեմ յերկինս. և դիր ծածկէ ’ի ծոց ամէնուս ծնողին, հողուն,,: — Վաց վետնամած ծերունին, հետն առած Ուհոդորի հին ընկերները և ուրիշ ծածուկ քրիստոնեաներ, հաւատացեալ եղաարք և քոլք, պարկեցտ կուսանք՝ որ քողով և մազով արցունքնին ծածկած, և բոցաշարժ Ճրագներ բռնած յուղարկաւոր կ'երթային Ուհոդորի: Արդեօք կային անսնց մէջ, կամ կայր մէկ մ'այլ, որ յուսացեր էր երկրիս վրայ այլ սրտակից ըլլալու սուրբ նահատակին, և յետմօրն կանչելու զնա՝ իմն Ուհոդոր. — պատմութիւնն կու լրէ:... Վահանայական և մարտիրոսական պաշտօն, աղօթք և արտասուք կատարուեցան. այն հովանաւոր ծառին ներքեւ և այն սեղանացեալ քարին քով փորուեցաւ երիտասարդին քնարանն, և ծածկեցաւ մարտիրոսին մարմինն: Անարաւեստ պարզունակ քարակոփ խաչ մը վկայ կեցաւ նահատակութեան և հանգըտեան սրբոյն Ուհոդորի: — Ուող գայ հիմա Ազուիթա աղօթելու երանեալ և աստուածազգեաց որդւոյ մը մնացորդաց վրայ: — Այսաւաիկ երանելի տիկինն, ծառէն աւելի մազերը ցրուած փուուած Ճակատ ’ի գետին: Իբրև կըրկին մարք Ազումունեան դատարանին, հողն ու Ազուիթա կու գրկեն ու իմն է կ'ըսեն այս որդեակս:... Վիչ մ'այլ սպասէ Ազուիթա, և ահա թագաւորն խաղաղութեան իր ցանկալի վճիռը կու տայ, և յափառեան քու կ'ըլլայ քուկդ Ուհոդոր:

Խակ հայրն... քաւ լիցի, ամենեին անարժան այդպիսի անուան, գազանացեալն, դիւամոնն կամ դիւաթախն Առուրէն, իր սատանայական սուրբ առած՝ և եկածէն աւելի շուտով փախչելով կու հեռանայ. տեղելն կը փախչին և ինքնիրմէ չկընար հեռանալ. “Դոչումնարեան որդւոյն բողոքէ յերկրէ և յերկնից,,: Հեղիկ գաւին արիւնն հիմա երկնաւոր նահատակի ահաւոր մասունք դարձած՝ սուրին վրայէն Առ-

բէնի սիրտը կու պատուեւ . կու փութայ խելացնորն՝ մօտի աղբիւրը , ազէկ մը կու լուայ կու Ծնծէ որդւոյն յետին նշանները , և անով իր և անոր միջի կապն՝ յաւիտեան կու Ծընծուի : Ոորս տարի այն դառնագոյն դահձին , խղձի խայթուածքներուն մատնուած՝ Այուրէն կեանք մը կամ կենաց պատկեր մը անցնելով , անզեղջ և անյօյս կուապաշտ մոլորութեամբ մեռաւ . և յիշատակն յանէծս և 'ի սոսկումն մնաց : ... Խւրածին որդւոյն արեան խուլ եղող սիրտն՝ չեղաւ արժանի Իստուծոյ որդւոյն ձայնը լսելու՝ | ուսաւորչայ բերնէն , և դառնալու 'ի հաւատա Այուդորի՝ համօրէն Հայաստանեայց հետ , որք յետ երկու տարւոյ արժանացան այս ամենամեծ պարգեիս : — Ա ան զի Ա . Այուդոր նահատակեցաւ յամին 296 այսօրուան ամսակետիս (11 մայիսի) 28 տարեկան և 6 ամսական . Այուրէն կորաւ 300<sup>ի</sup> . Ա . Կարիգոր լուսաւորիչ ելաւ 'ի վիրապէն յաջորդին (301) . և երբ հետևեալ տարին կ'երթար 'ի Աւսարիա՝ Հայոց Եպիսկոպոսապետ ձեռնադրուելու , անցաւ սովորական ճամբէն , Աալհունեաց գաւառէն և աւանէն , որչափ տարբեր 15 տարի առաջ անցածէն . փոխանակ շղթայից և կալանաւոր պահապանաց , հիմա Տրդատայ յաղթական կառաց վրայ գրուած և Հայոց ամենէն մեծ նախարարներն չորս գին առած : Ի . Ա . Հեզն և ազնուասիրտ հայրն մեր՝ փառաց վրայ աչք չունենալով , իր սուրբ ամանուկը կու փնտուեր . կանչեց գտաւ ծերունիք քահանայն և հարցուց զիմէռ դոր . Կաստիկ իր ընտրեալ հովուապետին ձեռքէն բռնելով տարաւ ցըցուց այն տեղը՝ ուր որ վեց տարիէ 'ի վեր կու քնանար իր հրամանաւ կնքուածն : Անչ կենդանակայլակ արտասուքներ էին որ | ուսաւորչայ մը աչքերէ իջան հայրաբար սուրբ երիտասարդին նշխարաց վրայ , որ իր քրտանց առաջին պըտուղն , և մեր լուսաշնորհութեան անդրանիկ խայրիքն էր . այսոր համար և առաջին վկայարան՝ յետ Հոկիսիմեանց

նշխարաց ամփոփման , Այուդորի հանգըտարանն եղաւ . ինքնին Կարիգոր դեռ չձեռնադրուած՝ կանգնեց հոն մատուռ մը , և երբեմն երախայ յանձնածը՝ հիմա սուրբ վկայ մը յանձնելով Կարիսիսի գնաց : Աւ երբ ցանկալի տաճարիկն իր ճակատը բարձրացուց դէպ յարեւելը , աջակողմեան անկիւնը հանգչեցուցին սրբոյն մաքուր նշխարքը . մէկայլ անկիւնն այլ՝ տապանաքարին դիմաց՝ զրին այն սրբեալ քարը՝ որ մեր գառին զենման սեղան եղաւ : Իւն երկու սիրալի սրբատաշ քարանց մէջ էր անկէ ետեւ՝ Այուիթայ սիրելագոյն հանգստարանն , որ իր որդւոյն մատրան սպասաւոր ըլլալով իբրև հաւատաւոր այրի մը , երկնախառն կեանք մը անցուց հոն . այլ ոչ երկայն ժամանակ : Այուդւոյն նահատակութենէն եօթն տարի վերջը , երբ հասաւ տարեգարձ անոր վերջին անգամ համբոյր տալուն և տընէն փախչելուն , նոյն օրը (5 մայիսի) Այուիթա , որպէս թէ գարձեալ զգալով այն ցաւալի կիլքը և որդին վնտուելու ելելով՝ աւանդեց աղաւնաշունչ հոգին . և ձկնասուն մարմինն թաղեցաւ իր որդեկին դիմաց՝ տաճարին դըռնէն գուրս : Այուր և առջի յիշեալ երկու սրբանիշ քարանց զուգորդ չորրորդ մ'այլ զրուեցաւ՝ Այուիթայ տապանին դիմաց , տաճարին արեւմնեան կողմը . և նելքեն հանգչեցաւ Դասիկ , որ այս սիրալի քան տիրալի հանգիսից մէջ առաջինն ըլլալով հասակաւ , վերջինն եղաւ ժամանակաւ . և ամէն բան կարգելէն կնքելէն ետեւ , ըսաւ իր ալէկից Աիմէռնին հետ . “ Այդ արձակեալ , Տէր , զծառայս քո 'ի խաղաղութիւն զի տեսին ալք իմ զիրկութիւն , ” . և հոն հանգեաւ ընդ արդարս :

Ա . Այուդորի թէ տապանէն և թէ այն աղբերէն ուր իր արեան կաթիլքն խառնեցան՝ սուրին լուալէն , շատ հըրաշքներ եղան հիւանդաց և մոլեգնելոց վրայ . և սմանք եղան , ինչպէս կու ցուցնէ երախտապարտ պատմին բանակարգութիւնն , յառաջ իսկ քան զշինութիւնն մատրանն և զգարձն Հայոց 'ի

ձեռն լուսաւորվին : Հայաղիրն շտիպէր զմեղ հոս մէկիկ մէկիկ յիշել զաննք . վկայասիրաց թողումք հին պատմը չին նշանածներէն ետքն այլ եղածները քննելու և իմացընելու մեզի իսկ , որ զայս իրենց կ'իմացընեմք : Եթէ հարցընէ սիրողն՝ իմէոդորի վկայարանը կամ ուխտատեղին , երթա յլազգընկա , և անցնի արևելեան կողմը և հարցընէ Գորոժու Ս . Ծորոս վահքը . զոր սրբազան նահատակէն 1140 տարի վերջ այլ յիշատակած գտնեմք 'ի գիրս " լիքծափառ և քարձրապատիւ ուխտ , կոչմանք : — Հոն քննէ գտնէ և համբուրէ մեր ըղձաւոր շրթամք այլ այն չորս սրբանիշ քարերը , և մանաւանդ հիւսիսային անկեանը . հոն կանգնի և համբուրէ (եթէ պահուի ցարդ) ձողաբարձ խաչի մը մէջ դրուած սրբոյն իմէոդորի քաղցրաբարբառ յիսուսախօս լեզուն , որոյ համար այլազգիք անգամ , (ասեն) այն տեղը կ'անուանեն Սբերէլք Ս . Թորոս (եթէ Պարոփուկամ Ալահունի անունէն փոխուած չէ այդ անունը) : Հանձնեմք իր հետ՝ աշխոյժ և ճարտարաբուեստ հասակակցաց լ . իմէոդորի , դիտել նկարել և ցուցընել մեզի այս պատմութեանս մէջ յիշեալ տեղուանքը . երկու ձորակները , երկու աղբիւրները , ծովակը , աւանները , դղեակները և այլն . — յանձնեմք անոնց վառվուուն մոտաց և կրթեալ արտից և մատանց՝ նուագել և երգել այս պատմութեան և եկեղեցոյ արժանի և ընտիր դրուագն . — աղաչեմք մեր եկեղեցւոյ գլխաւորաց , իրենց զանազան հոգոց մէկը պակսեցնելով կամ մէկ մ' այլ աւելցընելով , այսպիսի սիրութ սրբոյ մը յիշատակ շըձգել միայն յայսմաւուրաց թափթրփած թերթից մէջ , այլ քարձրաձայն հոչակել տալու սուրբ խորանաց վրայ , եթէ արդարեւ սրբոյն Պահիգորի լուսաւորչի գործակից և հոգեկից ըլլալն կու ճանաչեն իրենց առաջին հոգ և պարտք , և պաշտամամբք սրբոց քարձրացընել զիառու լուսուծոյ :

Հ . Ղ . Ս . Ա .

Ծանրութիւն և տեսակարար ծանրութիւն :

Բ

Որովհետեւ մարմնոյ մը տեսակարար ծանրութիւնն ուրիշ բան չէ բայց եթէ հաւասար տարածոցով ջրոյ ծանրութեանն հետ ունեցած համեմատութիւնն , ուստի այս համեմատութիւնը գտնելու համար պէտք է առնուլ նախ մարմնոյն բացարձակ ծանրութիւնն , ետքը նոյնչափ տարածոցով ջրոյն ծանրութիւնն , ու փնտռել թէ քանի անգամ առաջնոյն մէջ կը բովանդակուի երկրորդն : Երեք կերպ կայ մարմնոց տեսակարար ծանրութիւնը գտնելու . մէյմը կշուքով , երկրորդ՝ Կիբուրնի անօսրաշափով , և երրորդ՝ սրուակաւ :

Տեսակարար ծանրութիւնն հաստատեալու ։ — Կշուքով հաստատուն մարմնոյ մը տեսակարար ծանրութիւնը գտնելու համար , առնունք հասարակ կշուք մը և նժարին մէկուն տեղը տակը ճանկավ կարծնժար մը փոխանակենք ու չափելի մարմնութարակ թելով այն ճանկեն կախենք . հիմա միւս նժարը եթէ ծանրուներ դնենք մինչեւ որ հաւասարակշռութիւնն հաստատուի , այս կերպով կը գտնենք այն մարմնոյն բացարձակ ծանրութիւնն : Լինթազրենք որ այս չափելի մարմինն երկաթի կտոր մը ըլլայ , և կշռէ 39 կրամ , արդ եթէ զտած ջրոյ մէջ ընկղմենք զայն , կը տեսնենք որ նուազ կը կշռէ , օրինակի համար 34 կրամ . և պէտք էր ալ որ նուազ կշռեր , վասն զի ըստ սկզբանն Շքրիմեգեայ այս մարմինը տեղի տուած ջրոյն ծանրութեան մասամբն իր ծանրութենէն կը կտրունցընէ : Հետեւաբար եթէ հանենք 39 թիւէն՝ 34 թիւը , տարբերութիւնն 5 կը ցուցընէ տեղի տուած ջրոյն տարածոցին ծանրութիւնն , այսինքն ջրոյ տարածոց մը հաւասար այն երկաթիւն տարածոցին՝ կը կշռէ 5 կրամ : Ուստի հիմա ուրիշ բան շնար ընել